ԽԾԱԲԵՐԴԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԸ

Խծաբերդի մասին գրված հոդվածում «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանի» 2-րդ հատորում (Երևան, 1988 թ., էջ 740) կարդում ենք. «1918 թ. գյուղի մոտ տեղացի 250 քաջեր դիմադրել են թուրքերի կանոնավոր բանակի մի քանի հազար զինվորների հարձակումը և, թշնամուն մեծ կորուստներ պատճառելով, փախուստի են մատնել»: Եվ միայն այսքանը:

Խծաբերդ գյուղը պատմական Հայաստանի Աղահեջք գավառի նշանավոր ավաններից էր: Գյուղից հարավ-արևմուտք «Թեղուն աղբյուր» կոչված վայրից ցած, դեռ մինչև հիմա պահպանվում են հնագույն շրջանի կիկլոպյան ամրոցի պարիսպները: Այստեղ էլ ճարտարապետաշինության ժամանակ հայտնաբերվել են մ. թ. ա. 8—6-րդ դդ. գերեզմաններ: Մեր կարծիքով, նա հանդիսացել է այն նշանավոր ավանը, որին Ստեփանոս Օրբելյանը անվանում է Խոժոռաբերդ: Այս անունից էլ, հավանաբար, ուշ շրջանում ծագել է նրա ժամանակակից անունը՝ Խծաբերդ:

Խծաբերդը տեղադրված է ծովի մակերևույթից 2000 մ բարձրության վրա: Գյուղից արևելք և հյուսիս գտնվում են երկու բարձր գագաթներ՝ Սահունասար (Սլկհան սար) և Կաթնամուր լեռը: Սահունասարի գագաթից երևում է ամբողջ Զանգեզուրը, ինչպես նաև Ղարաբաղը (Արաքսից այն կողմ), իսկ Կաթնամուր լեռան գագաթից ողջ Սյունիքը, Գեղամա Սևանը արևելքից շրջապատող լեռները, և ողջ Արցախը: Հնուց ի վեր այստեղից հայերը խարույկի բոցի միջոցով ստանում և հաղորդում էին ազդանշաններ: Կրակակետերի թվով և դասավորվածությամբ հնարավոր էր կռահել, թե ինչ են հաղորդում (օրինակ՝ մեծ ընդհարումներ, թշնամու նահանջը): Այսպես, երբ 1918—20 թթ. սուրհանդակ Մանգասարը Ղարաբաղյան կոմիտեի պատվերով գնում էր Զանգեզուր, տեղ հասնելով, Գորիսից վերև լեռան վրա կրակ էր վառում, իսկ երբ վերադառնում էր Խծաբերդ, կրակը վառում էին Սահունասարի վրա, դրանով իսկ ցույց տալով, որ սուրհանդակը անվտանգ տեղ է հասել:

Խծաբերդում 19-րդ դարի վերջին կար մոտ 800 մարդ (80 նահապետական ընտանիք), գյուղն ուներ իր եկեղեցին:

Շրջակա գյուղերը, չհաշված չորս փոքր գյուղեր, Թեզխարաբ, Պետրոսաշեն, Սպիտակաշեն և Արփագյադուկ, թրքաբնակ էին, և ընդհարումներն անխուսափելի էին: Այդ իսկ պատճառով մարդիկ միշտ զինված էին: Հրացանը մարդուց անբաժան էր նաև աշխատանքի պահին. վար ու ցանք անելիս սովորաբար զենքը «շրջում էր» տիրոջ հետ միասին: Այսպես, եթե վարում ես, ապա հրացանը նախորոք դնում ես քեզանից 5—10 քայլ առաջ և երբ վարելով հասնում ես հրացանին, ապա այն նորից 5—10 քայլ առաջ ես տանում և այսպես շարունակ, որովհետև ավազակը կարող էր հայտնվել անսպասելիորեն:

... 1917 թվից հետո, երբ Անդրկովկասում ստեղծվում են երեք ազգային հանրապետություններ, հայերի վիճակը սարսափելի ծանրանում է: Մուսավաթիստների կառավարությունը ամեն կերպ ձգտում էր տեղահանել Ղարաբաղի և Զանգեզուրի հայերին: Նրանց հաջողվում է յուրահատուկ մեթոդով ճեղք ստեղծել Զանգեզուրի և Ղարաբաղի միջև: Ահա նրանց գործունեության սխեման՝ վերևից լիկվիդացնել Մինքենդ հայաբնակ խոշոր ավանը, հարավից՝ հայաբնակ Հարար ավանը, իսկ Հագարի գետի հովտում գտնվող քրդերին՝ թուրքացնել, օգտագործելով կրոնը: Ցավոք, այդ բանը նրանց հաջողվում է: Դրանից հետո նրանց նպատակն էր Զանգեզուրը և Ղարաբաղը մաքրել հայերից և ստեղծել «Մեծ Ադրբեջան»: Ղարաբաղի հարցը փակելու համար թուրքերը առաջխաղացումը սկսում են Աղդամից և Հարավային Ղարաբաղից: 1918 թ. ուշ աշնանը շատ խնամքով (մոտ վեց ամիս) նախապատրաստվելուց հետո շարժվում են Խծաբերդի վրա, որը ոչ միայն Ղարաբաղի հարավային առաջնաբերդն էր, այլ այն հիմնական կամուրջը, որով այդ դժվարին ժամանակաշրջանում Ղարաբաղը կապ էր պահպանում Զանգեզուրի հետ (Բերդաձորի—Ղարաղշլաղի գյուղերը արդեն ավերված էին թուրքերի կողմից):

Թուրքերը պատրաստվում էին գրոհի, իսկ հայերը մշտապես հետևում էին նրանց գործողություններին: Հայերը գյուղի շուրջ առավել կարևոր կետերում ունեին հսկիչ դիրքեր. և ահա մի օր Ներսես Սարգսի Զաքարյանի խումբը նկատեց, որ հյուսիսից՝ Քիրս լեռան կողմից դեպի Խծաբերդ է շարժվում մի հսկա բանակ: Շտապ լուր են ուղարկում գյուղ: Թուրքական մի քանի հազարանոց բանակը հավաքվում է Ղզլատեղերում առանց կասկածելու, թե հայերը տեղյակ են այդ մասին: Յոթ հոգուց կազմված հայկական քաջերի խումբը միանգամայն անսպասելի, մթության մեջ, կրակ է բաց անում թուրքերի վրա: Թուրքերի մեջ խուճապ է ընկնում, սակայն նրանց հրամանատարը կարողանում է խուճապը վերացնել, իսկ յոթ հայ քաջերը Ներսես Զաքարյանի հմուտ ղեկավարությամբ կռվելով նահանջում են դեպի ավելի հարմար դիրքեր: Պարզվում է, որ հարձակում է նախապատրաստվում նաև գյուղի հարավից՝ Այյանլուի կողմից: Գյուղը շտապ էվակուացիայի է ենթարկվում դեպի անվտանգ մի շրջան՝ Տումի գյուղի ուղղությամբ: Զինված ջոկատները գրավում են հարմար դիրքեր, սուրհանդակներ են ուղարկում դեպի հայկական գյուղերը, այդ թվում և դեպի Տումի գյուղը, որտեղ իր ջոկատով միշտ պատրաստ կանգնած էր հայ ժողովրդի պանծալի զավակ, լեգենդար հերոս, «Լեռնային Ղարաբաղի Անդրանիկը»՝ Թևան Ստեփանյանը: Թևանը այդ ժամանակ ընդամենը 26 տարեկան էր, բայց վայելում էր շրջակա գյուղերի հայության հարգանքը: Հանձին նրա հայը տեսնում էր իր փրկչին: Կռիվները գիշերային խավարի մեջ կատաղի բնույթ են կրում: Ճակատամարտի գլխավոր հերոսներից մեկը Ներսես Զաքարյանն էր, որի հետ ես անձամբ բազմաթիվ զրույցներ եմ ունեցել: (Նա մահացել է 1974 թ. ամռանը, 90 տարեկան հասակում: Հայրենակիցները նրան թաղել են Խծաբերդում, որպես ազգային հերոսի: Նախօրոք, Փարիզից, Անդրանիկի գերեզմանից հող էր բերվել և թաղման օրը լցվել հերոսի գերեզմանին, իսկ նրա ոտքերի տակ դրվել են մարտական փամփուշտներ):

Ահա մի քանի դրվագներ, որ ինձ պատմեց Ներսես Զաքարյանը. «Կռվի թեժ պահին ես դիրքերը թողեցի մի քանի երիտասարդների, նրանց պատվիրելով, որ փամփուշտը խնայեն, բայց թուրքերին միշտ պահեն կրակի տակ: Ես անձամբ, գիշերային մթության մեջ, մտա հակառակորդի բանակի մեջ, համոզված լինելով, որ այդ բազմահազարանոց խառնամբոխի մեջ բոլորն իրար ճանաչել չեն կարող և չեն էլ կարող երևակայել, որ իրենց շարքերում կարող է հայ երևալ: Խոսակցությունից ես իմացա, որ նրանք մոտ 5000 հոգի են, հարձակումը սկսել են երեք կողմից, գյուղը արցանի մեջ առնելու համար, իրենց հետ բերել են բազմաթիվ ձիեր և դատարկ ջվալներ, ավարը (թալանը) տանելու համար: Առաջ անցնելով ասեմ, որ այդ ջվալների մեջ իրենց ձիերին բարձած, նրանք տարան միայն իրենց դիակները»:

Տեղանքին քաջ ծանոթ լինելով, Ներսես Զաքարյանը դուրս է գալիս հակառակորդի դիրքերից, գլխատելով նրանցից մի քանիսին: Թուրքերը բղավում էին և պահանջում, որ հայերը հանձնվեն: «Էրմանիլար, թասլիմ օլուն, բիզիմ հոքումաթիմիզ վ[illegible]ր» (հայեր, հանձնվեցեք, մենք պետություն ունենք): Բայց ի պատասխան դրան՝ հնչում էին համազարկերը: Չիման տեղամասում կազմակերպված է բուժկետ՝ վիրավորներին օգնելու համար: Այդ կետը տնօրինում էին երկու մարդ՝ գյուղի վարսավիր Ջհանի Ավագը և Ջավահիր բաջին: Կռվի թեժ պահին ծննդաբերում է Ահարոնյան Առաքելի հարսը: Մանուկի ճիչը միախառնվում է հրացանների համազարկին: Կանանցից շատերը անիծում են դժբախտ մանչուկի աշխարհ գալը: Այդ ժամանակ Ջավահիր բաջին, որ գյուղի տատմերն էր, սաստում է բոլորին, ասելով. «Բղավիր, բալես, թող քո մանկական ճիչը, խառնվելով մեր քաջերի համազարկերին, սարսափ դառնա թշնամու համար, իսկ քո անունը մենք կդնենք Գրիգոր, Տեր մեծ լուսավորչի անունով, որպեսզի աստված մեզ օգնական լինի մեր հաղթանակի մեջ»:

Առավոտյան դեմ վրա հասավ նաև Թևանը Տումից: Կազմվեց թուրքերին ջարդելու հատուկ պլան: Այսպես կոչված [illegible]շագոյաս լեռան փեշից դուրս գալով հակառակորդի թիկունքը, թուրքական բանակը առան աքցանի մեջ, և թուրքերը խուճապահար սկսեցին ճողոպրել դեպի Ընձառյուծի լանջի անտառը (Փաղանցի գյուղը): Թուրքական կողմի զոհերն անթիվ էին, իսկ հայերը տվեցին միայն մեկ զոհ՝ թեզխարաբցի Թաթոսին: Նշենք, որ այդ ժամանակ Խծաբերդին մոտիկ բոլոր չորս գյուղերից բնակիչները հավաքվել էին Խծաբերդում և բոլորն էլ մասնակցել են այդ նշանավոր ճակատամարտին: Ահա այդ մարտում առավել աչքի ընկած հայորդիների անունները. Ներսես Սարգսի Զաքարյան, Թևան Ստեփանյան, Միրզա Ավանեսի Ոլունց, Մանգասար Թամրազի Հակոբյան, Գրիգոր Ավագի Մարտիրոսյան, Լևոն Հովսեփի Եգանյան, Ալեքսան Մանգասարի Թամրազյան....

Խծաբերդի ճակատամարտը մեծ նշանակություն ունեցավ, քանի որ նա վանեց Արցախի հարավից եկող ահավոր վտանգը: 1918-ի սխրանքը չի մոռանա հայ ժողովուրդը...

Ալեքսան ԵԳԱՆՅԱՆ
Դոցենտ